


ԳՐ. ԴԱԶԱՐՅԱՆ

ՄԱՏՂԱՇ ԱՆԱՍԻՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ
ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՄԻԶՈՑՆԵՐԸ



ԹԵՏՈՒԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

0 6 9 6 4 8 6

1939

Арм.
2-5251а

ԳՐ. ՀԱՅԱՐՁԱՆ

30 JUL 2010
974

619
Դ-15

ՍԱՏԼԱՇ ԱԽԱՍԻԿԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԴՐԱՅՑԴԵՄ
ԹԱՅԹԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

Инв. № 14132



ԵՐԵՎԱՆ

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿԱԳՈՒԹՅՈՒՆ

1939

19.06.2013

8640

ՄԱՏԼԱՇ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵԼ ԴՐԱՆՑ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Գյուղատնտեսական մատղաշ կենդանիների պահանումը սոցիալիստական անասնապահության զարգացման հիմքն և հանդիսանում է վարեկցի աղջակ, վորն արգելակում և մատղաշների աճեցման և պահպանման գործը, պետք և մեր լուրջ ուշազրության առարկան գառնա: Այդ աղջակներից են մատղաշների առողջության և կյանքին սպառնացող զանազան հիվանդությունները, վորոնց եյության և միջոցտումների հետ ծանոթանալը հնարավորություն կտա մեզ հաջողությամբ պայքարելու դրանց դեմ:

Ներկա բրոշյուրում մենք համառոտակի տալիս ենք մատղաշների գլխավոր հիվանդությունները և դրանց դեմ տարվելիք միջոցառումները:

Շնորհիվ իրենց նուրբ կաղմվածքի, նորածիններն ավելի հեշտ են յենթարկվում զանազան հիվանդությունների, քան նույն պայմաններում գտնվող մեծահասակ անասունները: Հետևապես, նրանց մեջ զանազան հիվանդությունների պատճառով առաջացող մահցության առկուն անհամեմատ բարձր ե, քան մեծահասակների մեջ:

Ծնվելուց առաջ հորթը, մտրուկը, զաւը, ուլը և



40560-67

В. Казарян
Болезни молодняка и борьба с ними

Гиз. Арм. ССР—Ереван 1989 г.

այն, իր մոր արգանդում պարուրված ե լինում հատուկ թաղանթով, վորը պաշտպանում ե նրան արտաքին աշխարհի ֆլամակար ազգակներից: Իր մոր արգանդում նա դժոնվում ե միորինակ ջերմության տակ և սնվում ե մոր արյան միջոցով իրեն հասնող պատրաստի սննդանյութերով: Այս յերեք պայմաններն ապահովում են պտղի նորմալ զարգացումը: Այլ են, սակայն, պայմաններն արտաքին աշխարհում, վորոնց զեմ հանդիման ե գալիս նորածինն իր կյանքի հենց առաջին բոպեյից: Մննդյան միջոցին մոր և պտղի միջև յեղած կապը (պորտը) կտրվերոց հետո նորածինն իր կյանքն սկսում ե վարել անկախ իր մորից: Կյանքի համար անհրաժեշտ թթվածինը նա շնչում ե ողից իր թոքերի միջոցով, իսկ սննդի համար անհրաժեշտ նյութերն ստանալով մոր կաթի միջոցով, մարսողության ե յենթարկում իր մարսողական որգաններով: Իսկ յերբ նորածինը զրջապատող պայմաններն այս կամ այն կերպ ազդելով նրա շնչառական և մարսողական որգանների վրա խանդարում են նրանց նորմալ աշխատանքը, նորածինը հիվանդանում ե և շատ հաճախ մահանում: Այս տեսակետից անհրաժեշտ ե մեղ իմանալ և ուսումնասիրել այն բոլոր պատճառները, վորոնք նորածիններին զանազան հիվանդությունների յենթակա յեն դարձնում: Այս պատճառներից են՝ նիւթար, վատ սննդած, բռնկապմ մայրեր, ցեւր, մուր, խօնավ, կեղոս գումեր յեկ հորբանոցներ, նորածինների սխալ յեվ անմահուր կերպիրամք յեկ նրանց զրասեմից զրկելը:

Անվիճելի ճշմարտություն ե այն, վոր առողջ մայրերը առողջ, սերունդ են տալիս իսկ հիվանդ, թուլակազմ մայ

րերը հիվանդ, թույլ սերունդ են տալիս: Վորեկցե պատճառ, վորը թուլացնում ե հղի անասունի առողջությունը, թուլացնում ե և նրա պտղի առողջությունը, վորը ծնվելոց հետո հեշտ և հիվանդությունների յենթարկում ու սատկում: Յեկ ընդհակառակը, առողջ և ուժեղ հղի անասունի պտղուն առողջ ե ծնվում և չի հիվանդանում, իսկ հիվանդանալիս ել շուտ և առողջանում:

Հղի անասունների առողջության վրա ազդում և նրանց թուլացնում են անվորակ և անբավարար կերակրումը, խտացրած կերերից ու հանքային աղերից նրանց զրկելը, հղիության վերջին շրջանում նրանց շցամքեցնելը, հակասանիտարական գոմելում նրանց պահելը, զրասանքից զրկելը և այլն:

Այս համառոտ դիտողություններից հետո դժվար չե, իհարկե, մեզ համար ըմբռնել եղի անասունին տրված ձիօս խնամքի յեկ կերակրման վճռական նօտակարչությունը նորածինների հիվանդարյաւնները կանխելու գործում:

Նորածինների սխալ և անմաքուր կերակրումը նրանց հիվանդությունների գլխավոր պատճառներից մեկն և հանդիսանում: Նորածնի մարսողական որգանը—ստամոքսը և աղիքները գեռ կատարելապես ամրացած չեն, նրանց պատերի լորձաթաղանթը չափազանց նուրբ և ու զգայուն: Այսպիսի զգայուն ստամոքսը յերբ ընդունում է սառը, կեղառու և անվորակ կաթ, անմիջապես հիվանդանում ե:

Մոր առաջին կաթը, վորը ժողովրդական բառով կոչվում ե «զար», նորածնի առողջության պահպանաման գործում վճռական դեր ե խաղում՝ յերբ նա լինում է լավ վորակի: «Դալլ» անվորակ և համարվում,

յիթե նա թանձր չի, յուրահատուկ դեղին գույն չուսնի, այլ նմանում ե սովորական կաթի Նման «դալի» կերակրումը նորածնի ստամոքսադիքային խանգարում և առաջացնում: Լավորակ «դալը», ազդելով վորպես լուծողական, նորածնի ստամոքսադիքային խողովակը մաքրում և այսուղի կուտակված կեղատություններից: Բացի դրանից, նա վոշչացնում է հորթի ստամոքսում և աղիքներում գտնվող վասակար միկրոբները: Կովերի «դալը» վատորակ և լինում այն գեպքում, յերբ նրանց վատ են կերակրում և հղիության վերջին շրջանում չեն ցածրացնում, այլ կթում են համարյա մինչև ճնելու ժամանակը:

Եերբ կաթը կթվում է առանց նախապես կովի կուրծը լինամքով լվարու, մաքրելու և չորացներու, իբ մեջ պարունակում ե մեծ քանակությամբ միկրոբներ, վորոնք ընկնելով նորածնի ստամոքսը և աղիքները, զարգանում են և առաջացնում յուրջ հիվանդություններ՝ սպիտակ փորլուծ, պարատիֆ և այլն:

Մատղաշների հիվանդությունների առաջացման գործում մեծ դեր են խաղում նույնպես խոնավ, ցուրտ, մութ, կեղուս և վատ ոգավորված բնակարանները: Ցուրտ և խոնավ հորթանացներում մատղաշները մըրսում են և յենթարկիում շնչառական և մարսողական գործառնների բարոքման—թոքերի բորբոքում, փորլուծ: Գոմի մթությունը և խոնավությունը նպաստում են այնտեղ զանգած հիվանդաբեր միկրոբների բազմացման լույսը և չորությունը, ընդհակառակը, վոշչացնում են այդ միկրոբները: Ոչանցքների բացակայության պատճառով գոմում կուտակված վասակար գաղերը՝ ամոնիակ, ածխաթթու, և այլն,

գրգռում են մատղաշների շնչառական որգանները և առաջացնում թոքերի բորբոքում:

Մատղաշների հիվանդությունները բազմասահեն, բայց նրանց առաջացնող պատճառները համարյա միևնույնն են: Այդ հիվանդություններից գլխավորներն են՝ սպիտակ փորլուծ, բաների բարօքումը, պուրի բարբումը յևկ ստամուադիթային այլ խանգարումները:

Վերոհիշյալ հիվանդությունները հատուկ են բուրութեակի գյուղատնտեսական անասունների նորածիններին—խոշոր և մասր իջջուրավոր անասուններին, ձիերին, խողերին, և այլն: Հետեւապիս մի տեսակի նորածինների հիվանդության ռւսումնասիրությունը հիմնականում վերաբերում է և մյուս տեսակներին վոչ միայն հիվանդության պատճառների, այլև նրադեմ ձեռք առնվելիք միջոցառումների նկատմամբ: Այս տեսակի տիպը մենք միջոցառումների կանգ կառանք այստեղ հորթերի հիվանդությունների և նրանց զեմձեռք առնվելիք միջոցառումների վրա, վորոնք ընդհանուր զծերով կարելի յե կիրառել և մյուս տեսակ գյուղատնտեսական կենդանիների մատղաշների նկատմամբ:

ՀՈՐԹԵՐԻ ՍՊԻՏԱԿ ՓՈՐԼՈՒԾԸ

Հորթերի սպիտակ փորլուծը սուր վարակիչ հիվանդություն և, վորը յերեվան և գալիս նորածնի կյանքի առաջին յերեք որվա ընթացքում: Արտահայտվում ե նա հորթի ընդհանուր թուլությամբ, ուժեղ փորլուծով—ջրիկ, բաց գույնի կղղղանքով:

Հիվանդությունը հատուկ և մսուրային շրջանին, մասնավորապես ձմռան վերջին ամիսներին և գար-

նանը: Յերբեմն նա յերկուն եղալիս աշնանը և ուժեղանում ե մինչև գարուն: Թեպետ հիվանդությունը գերակռում և մեկ որականից մինչև յերեք որական հոբթերի մեջ, բայց և այնպես նա կարող ե առաջանալ հենց ծննելու մոմենտում, և շատ ուժեղ համաճարակների գեղքում կարող ե տարածվել նույնպես ավելի մեծահասակ հորթերի վրա և անսովոր ձևեր ընդունել:

Հորթերի սպիտակ փորլուծի հարուցիչ միկրոբներից ամենագլխակորը աղիքային ցուպիկն (կոլի բացի) ե, վորն ունի իր զանազան տեսակները: Այս միկրոբը բնության մեջ ամենուրեք տարածված է: Նրանք գտնվում են մեծ մասամբ առողջ կենդանիների աղիքների պարունակության մեջ, վորոնք կը կըզանքի հետ արտաքսվում են գոմի մեջ, և այնտեղից զանազան ճանապարհներով ընկնում են նորածնի ստամոքսը:

Սպիտակ փորլուծի առաջացման գործում նորածինների կերակրումը վճռական դեր ե խաղում:

Նորածնին առաջին 24—48 ժամվա ընթացքում, յերբ շատ կաթ ենք տալիս, ստամոքսի գերլցումից նրա մոտ առաջանում ե անմարսող աթյուն, վորի հետեվանքով ստամոքսում և աղիքներում զարդանում են մեծ քանակությամբ աղիքային միկրոբներ, վորոնք 10—12 ժամվա ընթացքում տուշ են բերում կամ թունավորում և կամ սպիտակ փորլուծ:

Ոտար մարմիններ կուլ տալը նույնպես կարող ե նորածինների փորլուծ առաջացնել: Յերբեմն նորածին հորթը ցամքար և այլ ոտար մարմիններ ե կուլ տալիս, վորոնք պատճառ են զառնում ստամոքսաղիքային խանգարման և փորլուծի: Անկախ նրանից, թե փոր-

լուծն ինչ պատճառներից ե առաջանալ, նա վարակել ե դառնում մյուս առողջ հորթերի համար:

Հորթանոցի բարեխառնությունը նույնպես ազգում ե նորածնի առողջության վրա: Ցուրտ գոմերը, բաց գոներից ու լրւսամուտներից փչող միջանցիկ քամիները, քարից կամ ցիմենտից կառուցված ցուրտ պատերը նորածնի առողջության համար չափազանց մասակար են:

Մըսել՝ թռքերի բորբոքման և փորլուծի հաճախակի պատճառներից մեկն ե:

Սպիտակ փորլուծի նօտեները.—Հիվանդությունը կարելի յե բաժանել յերկու տեսակի. ա. աղիքների բորբոքում արյան վարակումով, բ. աղիքների բորբոքում առանց արյան վարակման: Առաջին դեպքում բացի աղիքներից, նորածնի արյան մեջ և ներքին որգաններում մեծ քանակությամբ ախտածին միկրոբներ են գտնվում, իսկ յերկրորդ դեպքում հիվանդության հարուցիչները միայն աղիքներում են գտնվում, վորտեղ նրանք թույներ են առաջացնում, ըստվորում նորածինը սատկում և աղիքներում միկրոբների արտադրած թույներից և վոչ թե միկրոբների արյան մեջ բազնալուց: Մեկից մինչև 3 որական հորթը հանկարծ գարշանոտ, զբիկ փորլուծ և ստանում: Հորթը ծնած ժամանակ, կամ քիչ հետո, սովորաբար թույլ կամ վոչ աշխույժ ե յերեսում: Հաճախ հիվանդությունն սկսվում է սատիճանաբար, ըստվորում թուլությունը և ախտաժակի պակասությունը հիվանդության առաջին նշաններն են հանդիսանում: Արյան բծերով ծածկված կղկղանքը և աչքի յեղջերաթաղանթի (սպիտակուցի) վրա արյունային բծերը հիվանդության սկզբնական

նշաններից են: Վորոշ գեղքերում կենդանին հանկարծակի թուլանում և միքանի ժամկա ընթացքում մահանում ե առանց փորլուծի նշանների: Հիվանդի մասն կերպ փշաքաղվում են, իսկ կաշին չոր ե լինում: Հետեւի մասը ծածկված ելինում զարշահոտ կղկղանքով, վորի հետևանքով այդտեղի մազերը թափվում են և մաշկը բորբոքվում ե: Սրաի զարկը մի բոպեցում 100—140-ի յն հասնում: ջնշառությունը նույնական արագանում ե: Զերմանթյունը լինում է 40° և ավելի բարձր: Բայց հետանցքից ջերմաչափը կարող է ջնայտաբերել այդ ջերմաստիճանը: Ախորժակը նվազում ե կամ բոլորովին բացակայում: Սովորաբար փորը ներս ե քաշվում, բայց ամելի մեծահասակ հորթերի փորը, կաթով լցվելու հետևանքով ուռած ելինում: Փորի վրա դործագրած ճնշումը ցավ ե առաջացնում: Կղկղանքը սովորաբար բաց գույնի յն լինում, ջրիկ ե և պղպջակներու ժամկեց: Նա կարող ե սպիտակավուն և խմբանման լինել չափազայուտ գեղքերում կարող ե փորը լուծ չնկատվել բոլորովին:

Հիվանդությունը տեսում է 24 ժամից մինչեւ յերկու յերեք որ, ըստվորում նորածինը չափազանց հյուծված և ուժասպառ զրության մեջ սատկում ե: Ուժասպառության աստիճանը հիվանդության սատկության համեմատ տարբեր ելինում: Համապատասխան միջոցառութերի բացակայության դեպքում մահացության տոկոսը բարձր ելինում:

Պորտի բորբոքման հետևանքով շատ հաճախ նույնպես փորլուծ ե առաջանում: Նորածինի ծնվելու ժամանակ խնամքով կատարած պարտի ախտահանումը նման գեղքերի թիվը զգալիորեն նվազեցնում ե:

Առժումը.—Յերբ ստամոքսը և աղիքները չափից դուրս լցված են կաթով, հանձնաբարվում ե դատարկել այն: Վորովայնի պատը շոշափելիս կարելի յետուգել ստամոքսի գերլցվածությունը: Ուղիղ ազերից կատարվող խոր կղկղան աղիքներում կուտակված կեղտուառթյունները հեռացնելու և փորլուծի հետևանքով մարմնից պակասած հեղուկը լրացնելու տեսակետից ոգտակար ե: Խոր կղկղան կատարվում ե կիսապինդ ուետինե խողովակի միջոցով (ձիու միզահան կատետը): Հեղուկը դանդաղ կերպով մտցվում ե ուղիղ աղիքը և մինենույն ժամանակ թույլ ձնշամով խողովակը հրվում ե առաջ: Կղկղանքը հեռացնելուց հետո հորթը նույն խողովակի միջոցով կարող ե ընդունել մի վար ֆիզիոլոգիական լուծույթ (0,85 % աղացուր), վորը գոյլ վիճակում պետք ե մտցնել աղիքը շատ թույլ հոսանքով: Ուետինե խողովակը սեղմելով կարելի յն կանոնավորել հոսանքի արագությունը: Այս ձեռվ նպաստում ենք արյան շրջանառության մեջ հեղուկի աստիճանաբար մուտքին:

Վորպես լուծողական կարելի յետալգենալիքակի ձեթ՝ 15 գրամից մինչև 30 գրամ: Ստամոքսից և աղիքներից գրգորիչ նյութերը հեռացնելուց հետո լուզջուցադրություն պետք ե գարձնել աղիքների զգալուն լորձաթաղանթի վրա, ըստվորում պետք ե տալ բիսությունի սուբնիտրատ 5-ից 10 գրամ, որտեղուն յերկու անգամ: Խորման դեմ 4 ժամը մեկ տրվում ե կերպերի սողայի լուծույթ (6 % լուծույթից 100 գրամ), կամֆորայի յուղ (5-ից 20 գրամ) որական մեկ կամ յերկու անգամ:

Փորլուծի հենց սկզբից հանձնաբարվում ե մեկ

որ հորթին բոլորովին կաթ չտաք, փոխարինելով այն
1—2 լիտր յեռացրած ջրով; վորը տրվում ե կաթի
ընական ջերմությամբ Փողուժը կտրելուց հետո ջուրն
աստիճանաբար պիտք ե փոխարինել կաթով, ըստվո-
րում յուրաքանչյուր կիրաբաժնում կես լիտրից վոչ
ավելի: Փողուժը շարունակիլու գեղքում հորթին
տալ գարու ալյուրից կամ կտավիատի սերմի ալյու-
րից պատրաստած հեղուկ, վորն ստացվում ե հետևյալ
ձևով: 1 մաս ալյուրի վրա ավելացնում են 3 մաս յե-
ռացող ջուր, խառնում ու թողնում են մինչև հովանա-
լը, վորից հետո հեղուկը տալիս են կենդանուն քա-
ռորդ լիտրից մինչև կես լիտր՝ յերեք, չորս ժամը մեկ
անգամ: Հանձնաբարվում ե նույյունիս վորովայնը
տրորել ջրի մեջ լուծված սպիրտով և հետո փաթթել
տաքացնող զրով:

Հիվանդության սկզբում հորթի մաշկի տակ սրբս-
կում են 60—100 գրամ հակակոլիքացիոնային շի-
ճուկ, առանձին կամ հակապարտիֆային շիճուկի
հետ միասին:

Սպիտակ փորլուծից սատկած հորթերի ստամոք-
սաղիքային տրակտում նկատվում են բորբոքման
նշաններ, լորձաթաղանթի վրա՝ ուժեղ կամ թույլ ար-
տահայտված կարմրություն, ավշային գեղձերում և
սրտի վրա՝ կետային արյուննոսություններ և այլն:

Պրաճիւտիկի (կանխարգելիչ) միջացառումները.—
Սպիտակ փորլուծ առաջացնող պատճառների վերա-
ցումը հանդիսանում ե պրոֆիլակտիկ միջոցառումների
գլխավոր հիմքը: Այս տեսակետից եղի կովի խնամքը
միջոցառումների շարքում առաջնակարգ տեղը պետք է
դրավի:

Ծնելուց 40—60 որ առաջ հղի կովերին պետք ե
ցամաքեցնել, վորպեսզի նրանք ի վիճակի լինեն վոչ
միայն ապահովելու պտղի նորմալ աճն արգանդում,
այլև ծնելուց հետո ապահովելու նրան լավորակ կաթով:
Յեթե կաթի առատության պատճառով հնարագոր չի
կովին մեկ անգամից ցամաքեցնել, ապա անհրաժեշտ
ե որվա կիթերի քանակը քչացնել, կերպարժնից դուրս
դցել յութալի կերերը, պակասիցնել ուժեղ կերերի քա-
նակը և այսպիսով նվազեցնելով կովի կաթնատվությու-
նը, աստիճանաբար անցնել նրա ցամաքեցման: Ցամա-
քեցման և ծինի ժամկետների վորոշման համար անհրա-
ժեշտ ե ունենալ կովերի բեղմնավորման ժամանակի
ճշշտ հաշվառումը:

Հղի կովերին պետք ե ապահովել լավորակ, խտաց-
րած յեկ կոռպիտ կերերով: Անհրաժեշտ ե հղի կովի
կերպարժնի մեջ ամեն որ տալ հանքային աղերի խառ-
նուրդ, բազկացած հավասար քանակությամբ քիմիա-
պես մաքուր կավճից, կերակրի տղից, կրաֆոսֆորա-
թթվային աղից կամ նրան փոխարինող վոսկրալյուրից:

Բացի անձրեվային և սառնամանիք որերից, հղի
կովերի համար անհրաժեշտ ե սահմանել ամենորյա
զբոսանք:

Ծնելուց 5—10 որ առաջ հղի կովերին պետք ե տե-
ղափոխել հատուկ ծնարան: Ծնարանը պետք ե լուսա-
վոր, մաքուր, տաք և չոր լինի: Այստեղ, վորտեղ ծնա-
րան չկա, գոմի մի անկյունը կտրվում և այդ նպատա-
կին ե հատկացվում: Ծնարանի կովերի համար անհրա-
ժեշտ ե մաքուր, չոր և առատ ցամքար ապահովել:

Ծնելուց հետո կովին հարկավոր ե գոլ ջուր և լավո-
րակ խոռ տաք: Վոչ մի գեղքում չի կարելի ծնած կո-

վին բաց թողնել զուլս՝ զէտից կամ առուեց ջուր խմելու: Նրան հարկավոր և միայն գոմում ջրել բարեխառն ջրով:

Յուրաքանչյուր կովի ծնից հետո ծնած տեղը լվացվում ե, ախտահանվում, չորացվում և հատակին առատ ցամքար փռվում՝ հաջորդ կովի ծինն ընդունելու համար:

Նորածին հորի խնամքը. —Ծնվելուց հետո նորածին հորթի դնչեց ու քթից լորձը մաքուր շրով սըրբել, պղուտն ախտահանել: Պորտի ախտահանությունը կատարվում ե հետեւյալ յեղանակով. լայնավիզ շիշ մեջ լցնում են յոդի լուծույթ և պղուտը թաթախում են այդ լուծույթի մեջ, ըստվորում շիշ բերանը սեղմում են վորովայնի պատին և այսպես թողնում հինգ րոպե: Այսպիսով ախտահանվում ե վոչ միայն պղուտը, այլև նրա արմատը: Ենը պղուտը ինքնստիճայն չի կտրվում, հարկավոր և վորովայնի պատից 5—8 սանտիմետր հեռավորության վրա, մաքուր և ախտահանված մղրատով կտրել և ախտահանել վերոհիշյալ ձեվով: Նորածին հորթին փափուկ ծղոտով կամ խոտավ հարկավոր և չորացնել և անմիջապես փոխադրել հորթանոցապրոֆիլակտորիում, վորը ծնաբանին անմիջապես կից պիտի լինի:

Հորթն ընդունողը մաքուր արտհագուստ պիտի ունենա և մաքրասեր պիտի լինի: Նորածին հորթերը պահվում են միայնակ տախտակե առանձին վանդակներում:

Հորթանոցապրոֆիլակտորիումը պետք ե չոր լինի և միջանցիկ քամիներից աղատ: Զերմությունը հորթանոցում միորինակ պետք ե լինի ($10-12^{\circ}$ ծելսիուսով,

հատակին): Հորթանոցի ջերմաստիճանի սուր փոփոխությունները հորթերի առողջության վրա շատ վատ են անդրադառնում: Յերբ հորթանոցի հատակը ասֆալտչե, անհրաժեշտ ե հատակի վրա շարժական տախտակամած կառուցելու: Աղբաջրերը դուրս տանելու համար հորթանոցն անպայման պիտի ունենա կոյուղի: Հորթանոցապրոֆիլակտորիումը հորթերը մնում են $10-15$ որից վոչ պակաս, վորից հետո փոխադրվում են մեծահասակ հորթերի բաժանմունքը:

Հորթերը միշտ պետք ե ապահովված լինեն մաքուր ու չոր ցամքարով, վորն ամեն որ պիտք ե փոխել Հորթերին ցամքար ուտելը, կեղտուա պատերը լիզելը արգելելու համար անհրաժեշտ ե նըանց դնչին անցկացնել մետաղյա ցանցից կամ ուռենուու ճուղերից պատըաստված դնչկամ Դնչկաները հորթերի դնչին պիտի թողնել մոտավորապես $10-15$ որ:

Հորթանոցում պիտք ե պահպանվի մշտական մաքություն, վորի համար անհրաժեշտ ե

ա. Որական յերկու անգամ հավաքել աղըն ու կեղտուած ցամքարը:

բ. Ամեն որ լվալ վանդակի կեղտուած պատերը, մաքրել կոյուղին, լվալ և մաքրել միջանցը:

գ. Հորթի վանդակն սպիտակացնել առնվազն 10 որը մեկ անգամ, իսկ ամրող հորթանոցն սպիտակացնել տարին յերկու անգամ՝ գործանը և աշնանը:

դ. Ամեն որ հորթերին մաքրել խողանակով և նըանց մաքմի կեղտուած մասերը լվանալ ու սրբել:

Կաթի միջնցով. հորթի վարակումը կանխելու համար կովի կուրծը ամեն անգամ, կթելուց առաջ, անհրաժեշտ ե գոլ ջրով խնամքով լվանալ, չորացնել, կաթի առաջին ցիթերը կթել առանձին ամանի մեջ և հորթին չտալ վորից հետո միայն հորթին արվելիք

կաթը կթել մաքուր և գուրըշու վրա ախտահանված ոռանձին ամանի մեջ և կերակրել կովը կթելոց և հորթերին կերակրելոց առաջ անհրաժեշտ և ձեռները լվանալ կերակրելոց հետո հորթերի գունչը սրբել մաքուր սրբիչով, ըստվորում ամեն մի հորթի համար պետք և ունենալ առանձին սրբէջ: Խեժը առալոց հետո հորթի դունչը լվացվում և մաքուր զոլ ջրով և չորացվում:

Կովկիթների և հորթապահների հագուստները և արտհագուստները շատ մաքուր պետք և լինեն:

Հորթին լինամողները հորթանոց մտնելոց առաջ պետք և հագնեն մաքուր արտհագուստ՝ ախտահանեն վոտնամանները հորթանոցի գուան առաջ դրված ախտահանիչ լուծույթի մեջ: Այս ահսակետից նպատական արմար և հորթանոցներում հագնել ու ոինն յերկայնավել կոչէիներ կամ կրկնակոշիկներ:

Հորթապահներն ուշիքուշով պետք և հետեւեն հորթերի առողջությանը: Հիվանդության ամենափոքր կառկածի դեպքում անհրաժեշտ է չափել հորթի ջերմությունը՝ 40° և բարձր ջերմություն ունեցող հորթին անմիջապես պետք և տեղափոխել հիվանդների համար հատկացված մեկուսարանը:


Թանի վոր հիվանդ հորթերը մած քանակությամբ վարակիչ միկրոբներ են՝ արտաքում, անհրաժեշտ և նրանց վանդակը և այն առարկաները, վարոնց հետ նրանք շփում են ունեցել, խնամքով մաքրել և ախտահաներ: Ախտահանության համար կարելի և զործածել թարմ մարմած կրի լուծույթը (1 գույլ ջրի մեջ 2 կիլոգրամ չմարմած կրի): Արտհապահումները, սրբիչները և շորերը լավ յեռացնել ֆլույերը և ամանները ան-

կրաժեշտ և սուրայի 2—3 տոկոսանոց լուծույթով յեռացնել:

Հորթանոցում սպիտակ փորլուծ առաջանալու գեպարում այլևս չի կարելի այստեղ նոր հորթեր ընդունել: Նրանց համար անհրաժեշտ և ժամանակավորապես, մինչև համաճարակի վերջանալը, մի այլ տեղ հարմարեցնել: Վարակված հորթանոցից վոչ մի դեպքում չի թույլատրվում նոր հորթանոցը փոխադրել վոչ մի առարկա, վոչ մի անասուն և վոչ մի հորթապահ: Համաճարակը վերացնելոց հետո վարակված հորթանոցը խնամքով մաքրվում և կեղուց և աղբից: Պատերը, առաստաղը և վանդակները սպիտակացվում են չհանգած կրով, հատակը փողողվում և կրեոլինի 5% լուծույթով: Առարկաներն ախտահանվում են կրեոլինի լուծույթի մեջ, իսկ ամաններները յեռացվում են:

Սատկած հորթերի գիշեկներն անմիջապես պետք և հեռացնել հորթանոցից և թաղել անասնագերեկմանոցում:

Նորածին հորթի կերպումը: — Նորածին հորթը կերպակվում և ծննդելուց $1\frac{1}{2}$ —2 ժամինեառ: Կաթը պետք և թարմ կթված լինի և ունենա 36—38 ջերմաստիճան: «Դալը» (մոր կաթը) հորթին տրվում և որական 4 անգամ: Առաջին որը միջակ քաչ ունեցող հորթին տրվում և 3—4 լիտր: Բայց և այնպես պետք և նկատի ունենալ յուրաքանչյուր հորթի առանձնահատկությունները: Նորածին հորթին պետք և իր մոր կաթով կերակրել 10 որից վոչ պահան:

Տուրերկուլյոպազոր և ոռուցելյողավոր. կովկերից ծնած հորթերին առաջանակած առողջ մայրերի կաթով, կամ հակամձիկ դեպքում՝ մեջանդ մայրերի  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱՐԿԱՐԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆ

կաթը տաքացնել փակ ամանի մեջ մինչև 80 աստիճան
10 րոպե, վորից հետո ամանը սառը ջրի մեջ դնելով
իջեցնել կաթի ջերմաստիճանը 37—38°-ի և անմիջաւ
պես կերակրել, կաթի մինչև 80 աստիճան տաքա-
ցումը վոչնչացնում և նրա մեջ գանված ախտածին
միկրոբները:

Այս դեպքերում, յերբ նորածին հորթերին ստիպված
ենք լինում կերակրել այնպիսի կովերի կաթով, վո-
րոնք ավելի շուտ են ծնել անհրաժեշտ և այսպիսի
կաթին ^{1/3} մաս յեռացրած և մինչև 36—38° հովաց-
րած ջուր ավելացնել:

Հորթերին կերակրելիս չպետք և թույլ տաք վոր
նորանք միանգամբ խմեն կաթը, այլ տալ 3—4 ընդ-
միջումներով, յուրաքանչյուրն առնվազը մեկ րոպե
տեղողությամբ:

Հորթերին կերակրելու ամանները պետք և լինեն
սպիտակ թիթեղից: Ամեն մի հորթի համար ցանկալի
յի ունենալ տռանձին գույլ: Հակառակ դեպքում կա-
րելի յի միքանի առողջ հորթերի համար գործածել
մեկ գույլ այն պայմանով միայն, վոր յուրաքան-
չյուր հորթի կերակրումից հետո դույլը յեռացրած
ջրով լվացվի և գոլորշիով ախտահանվի:

Այսանները պետք և բոլորվին մաքուր լինեն
Դրա համար անհրաժեշտ և յուրաքանչյուր կերակրու-
մից հետո նրանց պաղ ջրով վաղողել, տաք ջրով ու
սողայով (2—3 տոկոսանի լուծույթ) լվալ ու չորացնել:

Կերակրելուց առաջ անհրաժեշտ և բոլոր աման-
ներն անցկացնել յեռացող ջրից:

Միջոցառումներ առօսային օրջանում: — Սպիտակ
փորլուծի դեմ միջոցառումներն անհամեմատ հեշտ են

կիրառվում արոտային պայմաններում: Բաց ողում,
արևի ճառագայթների տակ վոչ միայն վոչնչանում
են սպիտակ փորլուծի հարուցիչ միկրոբները, այլև կա-
նաչ խոտի վրա արածող հղի մայրեց ծնում են առողջ,
դիմացկուն հորթեր, փորոնք անհամեմատ դժվար հն
հիվանդանում սպիտակ փորլուծով: Արեւու, չոր յե-
ղանակին ծինը կարելի յե ընդունել հենց կանաչ խո-
տի վրա, վորն ավելի մաքուր և քան լավ սաքըը-
ված և ախտահանված վորեցից հորթանոց: Այսուա-
մենայնիվ անհրաժեշտ և ունենալ արոտում ամառային
ծածկեր հղի կովերի համար և շարժական տնակներ,
վանդակներ նորածինների համար: Այս փորձը չայտա-
տանում տվել և շատ լավ արդյունքներ վոչ միայն
սպիտակ փորլուծի, այլև հորթերի այնքան վտանգա-
վոր հիվանդության՝ թոքերի բորբոքման կանխման
գործում:

ԳԱՌՆԵՐԻ ՍՄԻՏԱԿ ՓՈՐԼՈՒԾՈՅ

Պառների սպիտակ փորլուծն առաջանում և հա-
մարյա նույն պայմաններից, ինչ պայմաններից վոր
առաջանում և հորթերի սպիտակ փորլուծը: Հետևապես
միջոցառումներն ել այս յերկու հիվանդությունների
համար ընդհանուր են:

Լավորակ և բավարար քանակի կերով հղի վոչ-
խարների կերակրումը, չոր, լուսավոր և տաք փարախ-
ները, ծնող վոչխարներին և նորածին գառներին
առատ, մաքուր և չոր ցամքարի ապահովումը այն
հիմնական միջոցներն են, վորոնք սպահովում են սպի-
տակ փորլուծի դեմ աարվող պայքարի հաջողությունը:

Հղի վոչխարների գոմը խուլ պատով պետք և բա-

ժանել յիրկու մասի, առանձին մուտքի դռներով։ Այդ
բաժանմունքներից մեկը պետք և ծառայի վորպես
ծնարան ծնող վոչխարների համար, իսկ մյուսը՝ ծնե-
լու նախորյակին դտնվող վոչխարների համար։

Ծներուց հետո վոչխարները փոխադրվում են չոր,
լուսավոր գոմ։ Գառները պահպում են փոքր խմբերով,
առանձին վանդակներում։ Վանդակները պետք և լի-
նեն չոր, լուսավոր, և հատուկը փոփած լինի առատ և
մաքուր ցամքար։

Ծնարանում աշխատողները վոչ մի շփում չպետք
և ունենան այն հղի վոչխարների հետ, վորոնք գտնը-
վում են փարախի կտրված մյուս մասում։ Այս զաստ-
վորումը հնարավորություն և տալիս ծնարանում սովոր-
ակ փորլուծ առաջանալու դեպքում դադարեցնելու
ծինը այդտեղ, և այն հղի վոչխարները, վորոնք գտնը-
վում են փարախի յերկրորդ մասում, տեղափոխելու
ծնարանից հեռու գտնվող, նախապես մտքրված և ախ-
տահանված մի փարախ և այնտեղ ընդունելու ծինը։

Ծնարանում փորլուծ հայտնաբերվելու դեպքում
հիվանդ գառը իր մոր հետ միհասին անմիջապես մեռ-
կուսացվում են առանձին տեղ։ Նրա թողած տեղն ախ-
տահանվում է և վոչ մի անասուն չի պահպում այնտեղ։

Գառների սպիտակ փորլուծի բուժման ձեերը
հիմնականում այն են, ինչ վոր հորթերի սպիտակ
փորլուծի դեպքում։

Վոչխարներն արոտ գուրս գալուց հետո փարախ-
ները մաքրվում են, հատակն ախտահանվում, պատերն
սպիտակեցվում, լուսամուտները յերկու կողմից բաց
թողնվում, գոները փակվում և վոչ մի անասուն չի
թողնվում այնտեղ մինչև տշուն։ Իսկ ծնարանը մաք-

րելուց, ախտահանելուց հետո փակվում և մինչև հա-
ջորդ ծինի ժամանակը։ Այս ժամանակամիջոցում այն-
տեղ գտնված միկրոբները չորության ազդեցության
տակ վոչնչանում են։

ՄՏՐՈՒԿՆԵՐԻ ՍՊԻՏԱԿ ՓՈՐԼՈՒԾԸ

Մտրուկների սպիտակ փորլուծն առաջանում ե
հիմնականում միննույն պատճառներից, ինչ վոր հոր-
թերինը։

Մտրուկների փորլուծը կարող և առաջանալ կղկը-
ղանք, հարդ, խոռ կամ այլ ոտար մարմիններ կուլ
տալու հետեւվանքով։

Հիվանդության նշաններն առեասարակ առաջանում
են գլխավարապես ծնկելուց հետո, յերկրորդ շաբաթը,
ըստվորում հիվանդները մեծ մտսամբ առաջանում
են, իսկ միքանիսն ստամոքսի և աղիքների ուժեղ
բորբոքման հետեւվանքով սատկում են։

Բաժնուաբեր ծալ զենագերչակի ձեթ, 30 - 60 զրամ,
վորից հետո տալ բիսմութի սուբնիտրատ (5 - 10
գրամ), որական յերեք անգամ։ Մանր դեպքերում մաշ-
կի տակ ամեն որ սրսկել մորից վեցցրած արյուն
(100 - 200 զրամ)։

Կերակրման ժամանակի ընդմիջումներին կարելի
յե զամբիկին կթել։ Իսկ ոտար մարմիններ կուլ տալն
արգելելու համար անհրաժեշտ և մտըուկին գնչկալ
հազցնել։

ՄՏՐՈՒԿՆԵՐԻ ՊՈՐՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

(հոգատապ, արյան թարախային վարակում)

Մտրուկների արյան թարախային վարակումն ար-
տահայտվում և մորուկի հողերի, ջարների, յերկամ-

ների և մարմի այլ մասերի թարախային բարեգում-
մով: Յերեխն վարակվում է միայն արյունը՝

Հիվանդությունը մեծ մասամբ առաջանում է մըտ-
բուկի ծնվելուց հետո՝ ախոռի կեղտուտ հատակից պոր-
տի մեջ մուտք զործած ախտածին միկրոբների միջո-
ցով: Յեթե զամբիկները հիվանդ լինեն, կարող ե պա-
տահել մտրուկների նաև ներարգանդային վարակում:

Հիվանդությունն առհասարակ առաջանում է մըտ-
բուկի կյանքի առաջին յերեք որվա ընթացքում:
Զերմությունը 40° -ից բարձր ե, շնչառությունը արա-
գացած, ընդհանուր դրությունն ընկճված: Հոդերում
թարախային բորբոքումը նկատվում է հիվանդության
առաջին 24 ժամից հետո:

Վորոշ դեպքերում հիվանդությունը յերեան և գա-
լիս մտրուկի $10-14$ որական հասակում, ըստվորում
ծանր հիվանդները սատկում են 2-3 շաբաթից: Յեր-
եխն հիվանդության տռաջին նշանն է լինում վոտ-
ների վորեցե մի հոդի ուռչումը, վորին հաջորդում
է ընդհանուր թուլություն և հետո կատարյալ ուժաւ
սպառություն: Այս հիվանդության ժամանակ հաճախա-
միզությունը սովորական յերեւյթ ե, Պորտի թարա-
խալին բորբոքումը համարյա միշտ ընկերանում և
այս հիվանդության:

Սուր դեպքերում, յերբ հիվանդությունը յերեան և
գալիս մտրուկի ծնվելուց միքանի ժամ հետո, մահա-
ցությունը շատ բարձր տոկոս և կազմում՝ $90-100$:
Խրոնիկական (յերկարատե) հիվանդության ժամանակ,
յերբ բորբոքվում են աղորտը կամ հողերը, առանց արյան
նըդհանուր վարակման, առողջացման դեպքեր լինում
են: Հիվանդ մտրուկների մաշկի տակ սրսկվում ե իր

մոր արյունից $100-200$ գրամ, վորը տալիս ե քա-
ջալերիչ արդյունքներ: Քանի վոր այս հիվանդության
ժամանակ վարակը մեծ մասամբ մուտք ե գործում նո-
րածին մտրուկի պորտից, անհրաժեշտ է հոգ տանել
նրա մաքրության վրա: Զամբիկի ծննդաբերության
համար հատկացվում է մաքուր, ախտահանված հատուկ
մի տեղ: Ծնվելու հետո մտրուկի պորտը թաթախ-
վում և յոդի և շույթի մեջ: Հենց վոր մտրուկն ի
վիճակի յե լինում կիսականդնած գրություն ընդունե-
լու, պետք ե նրան բանած պահել և ծծեցնել: Մտրու-
կի ընկերքն ընկնելուց հետո զամբիկի հետեւ մասերն
ու կուրծը գոլ ջրով լվացվում ե և տեղափոխվում
առանձին ախոռ: Զամբիկի և մտրուկի տակ պետք ե
միշտ առատ, մաքուր ու չոր ցամքար լինի:

ՀՈՐԹԵՐԻ ՅԵՎ ԳԱՐՆԵՐԻ ՊՈՐՏԻ ԲՈՐԲՈՔԱԿԱՆԸԸ

Հորթերի պորտի բորբոքումն անասնապահական
տնտեսություններում հազվագեղ և նկատվում, բայց
հակասանիտարական պայմանների առկայության դեպ-
քում հիվանդությունը կարող է մասսայական բնույթ
կրել: Ծնվելուց հետո հորթի պորտը յորի լուծույթով
ախտահանելու միջոցով հնարավոր ե լինում այս հի-
վանդությունը կանխել:

Գառների պորտի բորբոքումը վոչխարաբուծական
տնտեսություններում յերեխն մասսայական, լուրջ
ընույթ և ընդունում: 1-3 շաբաթական գառների հո-
դերի ու ներքին որգանների թարախային բորբոքում-
ները պորտի բորբոքման հետևանք են, վորն առաջա-
նում է կենդանու պորտի մեջ ախտածին միկրոբների

մուտք գործելու և այնուեղ բազմանալու հետեանքով:

Հիվանդությունն արտահայտվում է կլինիկական յերկու տեսակ՝ նշաններով: Մեկը սուր տեսակն է, վորն ախտահարում և մեծ մասամբ մեկ շաբաթական դառներին և մահ է պատճառում, իսկ մյուսը՝ ավելի յերկարատես է, ավելի մեծամասակ դառների մեջ և զարգանում և կաղություն, վոտների ձգվածություն կամ անդամալուծություն և առաջացնում:

Այս հիվանդությունը կարելի յե կանխել գտուան պորտի կատարյալ ախտահանությամբ: Ծնարանը և դառների վանդակները շատ մաքուր պետք ե լինեն և հատակին առատ, մաքուր ու չոր ցավքար փոված լինի: Գառան պորտն ախտահանում են յոդ լցրած լցյանավեց անոթում պորտը թթվախելով:

ՅՈՐԹԵՐԻ ՊԱՐԱՏԻՖԸ

Հորթերի պարատիֆը սպիտակ փորլուծից հետո ամենահաճախ պատահող հիվանդություն է հանդիսանում: Հիվանդանում են առասարակ 2 շաբաթականից մինչև 4 շաբաթական և ավելի մեծահասակ հորթերը Բայց և այնպես կարող են հիվանդանալ միքանի սրական հորթերն ել Հիվանդության հարուցիչն և պարատիֆի միկրոբը, վորն առողջ հորթերին փոխանցվում և պարատիֆով հիվանդ հորթերից՝ ուղղակի կամ անուղղակի ճանապարհներով: Հարուցիչները կարող են գտնվել նուև առողջ կովերի կլիկանքի մեջ և կաթի միջոցով կարող են առողջ հորթերին փոխանցվել:

Հորթերի անկանոն կերակրումից առաջացած ստամքսազիքային տրակտի բորբոքումը շատ հաճախ

նախատրամագրող գործոն է հանդիսանում պարտիֆ հիվանդության յերկան գալուն:

Հիվանդության նօանները.—Ծածուկ շրջանը, այսինքն հորթի որգանիզմը միկրոբների մուտք գործելուց մինչև հիվանդության նշանների հայտաբերվելը 2—8 որ հի հիվանդությունը կարող է թիթիկ կամ մահացու ընթացք ընդունել: Հիվանդության սկզբում նկատվում է ընդհանուր թուլություն, յերբեմն արդյունքական կարող լինելու համար շերմություն: Նկատվում է նույնական փորլուծ, վորն սկզբնական շրջանում կարող է բացակայել: Կղղանքը կիսահեղուկ վիճակ ունի, թուլի գեղնագույն, գարշահոտ և յերբեմն արյունախառն: հազվագեղ չեն և շնչառպառությունն ու հազը: Վոտների հողերը կարող են ուռչել: Յերբեմն կարող են նկատվել ուղեղային խտնգարումներ, վորոնք արտահայտվում են ակամա շարժումներով և ջղաձգումներով: Հիվանդության շատ սուր ընթացքի գեղքում մահը կարող է վրա հասնել միքանի ժամկա ընթացքում: Բայց ավելի հաճախ հիվանդության ընթացքը մեկից մինչև յերկու շաբաթ ե, ըստվորում հորթը չափազանց հյուծվում է: Յերբեմն հիվանդությունը կարող է 3—4 շաբաթ տևել:

Մահացած հորթի ներքին որգաններում նկատված փոփոխությունները.—Աղիքներում որյունահոս կամ սպիտակուցային (Փիբրինային) բորբոքում և նկատվում: Աղիքային ավշային գեղձերը մեծացած են և հյութալի: Փայծաղը բնական ծավալից յերկու կամ յերեք անգամ մեծացած ե լինում, վոր պարատիֆի ամենահատկանշական փոփոխություններից մեկն է: Լյարդը մեծացած է, կտրելիս թուլի գեղնագույն տեսք

ունի և կարող ե պարունակել գնդասնդի զլսի չափ
կամ ավելի մեծ գորշագույն կետեր, վորոնք վոչ այլ
ինչ են, յեթե վոչ լուրդի մահացած հյուսվածքը: Յեր-
բեմ նկատվում ե նույնպես թոքերի բորբոքում:

Միջոցառութենքը նույնն են, ինչ վոր սպիտակ
փորլուծի ժամանակ: Հիվանդներին պետք ե բաժանել
յերեք խմբի և առանձնացնել ըստ հիվանդության
ընթացքի՝ նոր հիվանդների, յերկարատև հիվանդների
և հիվանդացած ու առողջացածների: Հիվանդությու-
նից առողջացածներին վոչ մի դեկղում չպետք ե խառ-
նել առողջ հորթերի հետ, վորովհետև առաջնները
կարող են յերկար ժամանակ իրենց կղկղանքի մաջ
հիվանդության հարուցիչներ պարունակել և առողջ-
ներին վարակել:

Հիվանդության սկզբնական շրջանում հիվանդնե-
րին կարելի յե հակապարատի ֆայերն շիճուկ սրսկել
բուժիչ դոզաներով: Առողջներին նույնպես կարելի յե
նույն շիճուկից կանխարգելիչ դոզաներով սրսկել:
Պարատի ֆից անապահով տնտեսություններում տաս-
նուեինդ որականից բարձր հորթերը պատվաստվում
են փորմալինով սպանված պարատի միկրոբներով
(Փորմոլ վակցինա):

Պարատի ֆի գեմ պայքարի երգնական միջոցը
զուհիգիենիկան պայմանների անօնդ կրտումն ե:

ՅՈՐԹԵՐԻ ԲՈՒՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

Մատղաշների, մասնավորապես հորթերի թոքերի
բորբոքումը ծանր կորուստներ ե պատճառում, ծուրտ յե-
ղանակին նորածնին մըսեցնելը հիվանդության դլխա-

վոր պատճառն ե հանդիսանում: Մատղաշները մըսում
են բաց դաներից, լուսամուաներից առաջացած միջան-
ցիկ քամիներից, քարե պատերով, ցուրտ ու խոնավ
գոմերից: Այս հիվանդությունն առնասարակ առաջա-
նում ենոյեներից մինչեւ մայիս ամիսը, իսկ աննպաստ
կլիմայական պայմաններում՝ նուե ամառվա առաջին
ամիսները: Փոքր վանդակներում հորթերի կուտակվա-
ծությունը, ողափոխության և զրուանքի բացակայու-
թյունը նույնպես վճռական դիր են խաղում այս հի-
վանդության առաջացման համար: Մի անգամ վոր
հիվանդությունը բուն դրեց հորթանոցում, նա հեշ-
տությամբ տարածվում ե մյուս առողջ հորթերին:
Բայց և այնպիս, հիվանդության հիմնական պատճառը՝
գոմի ողի հակասանիտարական պայմաններն են հան-
դիսանում: Հորթանոցի բարեխառնության տատանում-
ները մատղաշների մըսելու համար նույնպես նպաս-
տափոր պայմաններ են ստեղծում: Շնչառական որ-
դանները մըսելու հետևանքով թուլանում են և այնտեղ
մեծ քանակությամբ զանազան տեսակի միկրոբներ
են զարգանում, վորոնք հետագայում մյաւս առողջ
հորթերի համար վարակիչ են դառնում:

Հիվանդության հօաննենքր.՝ Թոքերի բորբոքումը
յերկու տեսակ՝ կինում՝ սուր և խրոնիկան (յերկա-
րատե): Սուր տեսակով հիվանդանում են մեկից մինչեւ¹
չորս շաբաթական հորթերը, իսկ խրոնիկանով հի-
վանդանում են ավելի մեծ հորթերը՝ մինչեւ վեց ամ-
սական: Բայց և այնպես սուրքի և խրոնիկականի միջև
մեծ, սահմանագծող տարբերություն չկա: Յերբ հորթը
մի շաբաթվա կամ տասն որլա ընթացքում սատկում

ե կամ առողջանում, կարելի յե հիվանդությունը սուր անվանել:

Հորթանոցում վոչ բոլոր հորթերն են հիվանդանում: Վամանք տառապում են միայն բրոնքերի բորբոքումավ, մինչդեռ ուրիշները՝ թոքերի տարրեր ասահանի բորբոքումով: Մեկի հիվանդությունը կարող ե հանկարծակի սկսվել և ընթացքը չափազանց կարծ լինել, մահացու յերպվ, իսկ մյուսի մոտ կարող ե աստիճանաբար սկսվել և ընթացքը յերկարատև լինել Առաջին անգամ աչքի յե ընկնում հիվանդի ընկածված դրույթումը, հազը կամ արագ օնչառուրյաւնը: Աչքի լորձաթաղանթը կարմրած ելինում: Զերմությունը 40° -ից մինչև $41,5^{\circ}$ և ավելի բարձր ելինում: Հիվանդին շատ հեշտությամբ կարելի յե հազարական գործարաններում հիվանդագին նշաններ յերկալուց մեկ-յերկու որ առաջ հորթի զերմությունն արդեն բարձրացած ելինում: Ընկճագածությունը, վատ ախտոքակը, փշաքաղաք մազերը և արագ նիհարումը հաճախակի յերկույթներ են այս հիվանդության ժամանակի: Այնուամենայնիվ հորթը շարունակում ե կաթ ուտել մահից միքանի ժամ առաջ: Քից հաճախ հոսում ե լորձաթարախային արտաթորում, վորի առատությունը վատ նշան է: Ամենից կարեոր ախտորոշէ նշաններն են՝ արագ օնչառուրյաւնը, արհեստական կերպով եթօնուրյամբ առաջ յեկող հազը յեվ մարմինի բարձր զերմությունը:

Հիվանդության տելողությունն անորոշ է: Յերբ յերկու շարաթվա ընթացքում բարելավման ցայտուն նշաններ չեն յերեսում, դրությունը համարյա միշտ անհուսալի յե: Հիվանդներն առհասարակ մահանում

են հիվանդության սկզբից յերկու կամ չորս շաբաթ հետո: Բայց կարող են և այս ժամանակամիջոցից ավելի շուտ կամ ուշ մահանալ: Վամանք, ըստ յերեվույթին, առողջանում են, բայց միքանի շաբաթ հետո թոքերում մնացած մի հին ոջախի բռնկման հետեւվանքով հանկարծակի մահանում են: Կատարյալ առողջացումը հազվագեց է, իսկ յերբ առողջացումը տեղի յե ունենում առաջին յերկու շարաթվա ընթացքում, կամ թոքերը միայն թույլ կերպով են բորբոքված լինում, առողջացումը կարելի յե կատարյալ համարել:

Սխարանական անառումիական փոփոխությունները:— Հիվանդության սուր ընթացքի դեպքերում թոքերի առջեկի բլթակները պնդացած են լինում (լյարդացում) և ամբողջ թոքերը արյունակալած: Յերեմի նկատում ե վառակալած պլեկիտ (կրծքի խոռոչի ներքին մակերեսի բորբոքում): Հիվանդության յերկարատեղ ընթացքի դեպքում թոքերում նկատվում են թարախակալած հանգույցներ, իսկ ավելի յերկարատև ընթացքի ժամանակ՝ թոքային հյուսվածքի մեծածավալ պնդացում: Առաջին փոփոխությունները լինում են թոքերի առջեկի և ստորին բլթակներում:

Թուժավ:— Հիվանդներին փոխադրել չոր, տաք զոտ: Թարմ ուղին անհրաժեշտ է, բայց վոչ ի հաշիվ տաքության և չորության: Այլ կերպ ասած, ողափոխությունը պետք ե կատարել այնպես, վոր հորթանոցի զերմությունը չնվազի և խոնավությունը չտվելանա: Հիվանդին կատարյալ հանդիսու ու սննդարար կեր պետք ե տաք Յեթե հորթը դեռ ծծկեր և և սերահանված կաթ ե ստանում, անհրաժեշտ ե փոխարինել նբան անարատ կաթով: Հիվանդության սկզբա-

նական շրջանում հանձնարարվում և սպիրտից տաք կոմպրեներ գործադրելը նովարսենոլի ներյերակային սրսկումը հաճախ՝ քաջալիրիչ արդյունքներ և տալիս Տրվում են նույնպես խիստան դեղեր Յերբ տնտեսությունը պարատիֆի նկատմամբ անապահով է, հիվանդ հորթին կարելի յե հակապարատիֆային շիճուկ սրսկել ուսւժիչ դոզաներով:

Եանիարգելիչ միջազգառամենու. — Թանի վոր մատղաների թոքերի բորբոքումը զլիսավորապես առաջ և գալիս հորթանոցների ողի հակասանիտարական պայմաններից, անհրաժեշտ և վերացնել այդ պայմանները, հորթանոցները տաք, լուսավոր պետք և լինեն Հորթի վանդակը ընդարձակ պետք և լինի և հատակը միշտ չոր, մաքուր ցամքար փռած:

Տարվա բոլոր յեղանակներին, յերբ անձըն, ձյուն և քամի չկա, հորթերին, տասն որականից սկսած պետք և տալ ամենորյա բացությա զբոսանք, ըստվորում առաջին որը 10 րոպե, յերկրորդ որը՝ 15 րոպե և այսպես աստիճանաբար զբոսանքի տեվզությունը կարելի յե բարձրացնել մինչև 1—2 ժամի, հորթի հասակի և ողի պայմանների համեմատ:

Զբոսանքի ժամանակ հորթերին միշտ շարժման մեջ պետք և պահել վորպեսզի չմրսեն: Զբոսանքի համար հորթանոցին կից առանձնացնում են ցանկապատված բակ, վորտեղ հորթերը դուրս են գալիս ուղղակի հորթանոցից, առանց այս ու այն կողմ փախչելու:

Հորթանոցների քարե պատերի ցուրտը և խոնավությունը մեկուսացնելու համար անհրաժեշտ է, յե վոչ ամբողջ պատի բարձրությամբ, գոնի նրա կես

բարձրության վրա, պատից 15 սանտիմետր հեռավությամբ խփել ֆաներկաներ, և պատի ու ֆաներկայի միջև առաջացած տարածության մեջ փայտի թեփ կամ զարման լցնել: Այս միջոցառումը վորոշափով ապահովելով հորթանոցի աաքությունն ու չորությունը, զգալիորեն կնվազեցնի հորթերի թոքերի բորբոքման զեպքերը:

Ամենից նպատակահարմարն է, իհարկե, հորթանոցի պատերը փայտից կառուցել: Զնայած նրան, վոր այս շինանյութով կառուցված հորթանոցը թանգ և նստում, բայց նկատի ունենալով, վոր փայտյա հորթանոցներում հորթերի թոքային հիվանդությունները և նրանցից առաջացած մեհացության թիվը զգալիորեն նվազում է, ապա նման հորթանոցների կառուցումը ջերմորեն կարելի և հանձնարել: Այս փորձը մատղաշխողերի թոքային բորբոքումը կանխիելու տեսակետից դրական արդյունքներ և ավել թոքերի բորբոքման դեմ վորպես կանխարգելիչ միջոց լավ արդյունքներ են ավել ամառային սեզոնում արոտում հորթերի բացությա աճեցումը, յեթե չափաղանց շոգից և անձրենքերից նրանց պաշտպանելու համար ժամանակավոր արժական տախտակե շենքեր ու ծածկեր լինեն:

Պատ. իմբագիր՝ ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխ. իմբագիր՝ Լ. ՌԱՍՆԵՅԱՆ
Մըստղիչ և. ԱՅՀԱԶՅԱՆ



Գլավիտի լիազոր՝ վ-1138

Հրատ. № 4964, պատվեր 286, տիրագ. 2000

Հանձնված և արտադրության 1939 թ. հունիսի 23-ին

Սառըադրված ե տպագործության 1939 թ. հոկտեմբերի 11-ին

Պետհրատի թ-ը և պապան, Յեղեվան, Նալբանդյան ճ

«Ազգային գրադարան»



NL0283162

Գիշե 20 ԿՈՊ.

618

8640

| 12-5251₂

382

381